

Հաշվետվություն

հանրակրթության և առողջապահության որակից բնակչության բավարարվածության սոցիոլոգիական հետազոտության արդյունքների մասին

Հետազոտությունն իրականացվել է 2005թ. նոյեմբեր - 2006թ. փետրվար ամիսներին: Նրա նպատակն էր ուսումնասիրել

Առաջնային տեղեկատվությունը ստացվել է կիսաստանդարտացված հարցազրույցի օգնությամբ: Հարցման է ենթարկվել 1000 մարդ: Հարցվողներն ընտրվել են հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Հետազոտությունը եղել է ընտրամաշային: Կազմվել է համամասնական ընտրամաք: Որպես ընտրամաքի հիմք ծառայել է հանրապետության բնակչության վերաբերյալ 2005 թվականի տեղեկագրքում ներկայացված տեղեկատվությունը: Ընտրամաքի ծավալը եղել է 1000 մարդ: Այն ըստ համամասնությունների բաշխվել է ըստ հանրապետության մարզերի՝ հաշվի առնելով նաև այդ մարզերում քաղաքային և գյուղական բնակչության համամասնությունները:

Որպես առաջնային տեղեկատվության ստացման մեթոդ ընտրվել է կիսաստանդարտացված հարցազրույցը: Հետազոտության նախապատրաստական փուլում կազմվել է հարցաշար, որի օգնությամբ պետք է հարցազրույցներ անցկացվեին: Հետազոտության գործիքի/հարցազրույցի պլան/ պիտանիությունն ստուգելու համար կատարվել է թռուցիկ հետազոտություն, որի ընթացքում հարցազրույցներ են անցկացվել 100 մարդու հետ: Նրանք եղել են հանրապետության տարբեր բնակավայրերի հանրակրթական դպրոցում տասներորդ դասարանցի երեխա ունեցող ծնողներ: Այդ հարցման ժամանակ հարցերի մեծ մասը տրվել է բաց տեսքով:

Այնուհետև թռուցիկ հետազոտության արդյունքները վերլուծվել են, բացահայտվել են չաշխատող հարցերը, ճշգրտվել են հարցերի ձևակերպումները, որոշ բաց հարցեր փակվել են և ստեղծվել է հետազոտության գործիքի վերջնական տարբերակը: Այն բազմացվել է 1000 օրինակ: Դրանք տրվել են հարցազրուցավարներին, ովքեր անհրաժեշտ հրահանգավորում ստանալուց հետո սկսել են հարցազրույցներ կատարել հանրապետության բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Ըստ մարզերի հարցվածներն այսպես են բաշխվում՝ տոկոսներով ընդհանուրի նկատմամբ.

1.	Արարատ	84	8,5
2.	Արագածոտն	51	5,1
3.	Արմավիր	65	6,5
4.	Գեղարքունիք	66	6,6
5.	Լոռի	91	9,2
6.	Կոտայք	86	8,7
7.	Շիրակ	87	8,8
8.	Սյունիք	48	4,8
9.	Վայոց Ձոր	17	1,7
10.	Տավուշ	39	3,9
11.	Երևան	360	36,2
	ընդամենը	994	100%

Հարցվածների ժողովրդագրական բնութագրերն այսպիսին են՝
տղամարդիկ՝ 35,8% կանայք՝ 63,9 %

քաղաքաբնակները՝ 73,6 % գյուղաբնակներ՝ 26,4 %
աշխատողներ՝ 57,6 % չաշխատողներ՝ 38,4 %

Հարցվածներն ըստ տարիքի բաշխվում են այսպես.

մինչև 35 տարեկան	4,0
36 - 40	25,5
41 - 45	36,1
46 - 50	25,2
51 - 55	6,7
56 և ավելի	1,7
պատասխան չկա	0,8
Ընդամենը	100 %

Հարցվածների մոտավորապես 39 %-ն ունի բարձրագույն կրթություն, մնացածը միջնակարգ մասնագիտական և միջնակարգ կրթություն:

Հարցումը ցույց տվեց, որ հարցվածների մեծ մասի երեխաները որպես դպրոցի շարունակություն ունեն համալսարանական կրթություն ստանալու պլաններ: Չնայած այդ տեղեկատվությունն ստացվել է ծնողներից, կարելի է վստահ լինել, որ նրանց երեխաները նույն պատասխանը կնշեին, եթե հարցն ուղղակի հասցեագրվեր նրանց: Համեմայնդեալ, հարցվողների 62,3 տոկոսի պնդմամբ տասներորդ դասարանում սովորող իրենց երեխան դպրոցից հետո մտադիր է ընդունվել համալսարան:

Այս թիվը փոփոխվում է կոնկրետ մարզից և բնակավայրի տիպից կախված՝ քաղաքային և գյուղական:

Երեխայի պլանները	Երևան	Արարատ	Արմավիր	Արագած.	Գեղարք.	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Լոռի
աշխատել	9,2	7,1	9,2	9,8	15,2	11,6	12,6	2,1	5,9	15,4	9,6
սովորել տեխնիկոմում, քոլեջում	16,9	16,7	18,5	13,7	31,8	25,6	10,3	8,3	35,3	15,4	22,0
սովորել համալսարանում	65,6	66,7	58,5	66,7	45,5	48,8	66,7	85,4	41,2	53,8	61,5
գնալ բանակ	1,9	1,2	7,7	5,9	1,5	3,5	3,4	4,2	5,9	7,7	
արհեստ սովորել	1,4									5,1	
այլ պատ./որոշված չէ, պատ.չկա/	5,0	8,3	6,2	3,9	6,1	10,5	6,9		11,8	2,6	9,9
ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Ինչպես տեսնում ենք, բոլոր մարզերում էլ ուսման շարունակման պլան ունեցողները բավականին մեծ թիվ են կազմում: Նկատվող տարբերությունները հավանաբար պայմանավորված են տվյալ բնակավայրում կրթական հաստատությունների առկայությամբ, այլընտրանքների բազմազանությամբ, բնակչության կենսամակարդակի և ապրելակերպի առնձնահատկություններով և այլն: Նույն փոփոխականը բնակավայրի տիպի/քաղաք, գյուղ/ հետ կապի մեջ դիտարկելիս պարզվում է, որ համալսարանական կրթություն ստանալու պլան ունեն հարցված քաղաքաբնակների երեխաների 65,8 տոկոսը և գյուղաբնակների 52,3 տոկոսը: Բոլոր դեպքերում միջին հաշվով երեխաների 70-80 տոկոսը ունի ուսումը շարունակելու, և առաջին հերթին համալսարանում, մտադրություն: Սա բավականին մեծ թիվ է: Դեռ խորհրդային տարիներին Հայաստանի դպրոցներում կատարվող սոցիոլոգիական ուսումնասիրությունները վկայում էին բուհական կրթության բարձր հեղինակության և դեպի բուհական մասնագիտությունները երիտասարդության ճնշող մեծամասնության կողմնորոշման մասին: Այն

Ժամանակ միջնակարգն ավարտողների մոտավորապես 80 տոկոսը փայփայուն էր բուհ ընդունվելու պլաններ: Այդ ցուցանիշն ամենաբարձրերից մեկն էր Խորհրդային միության տարածքում: Սովորաբար կյանքն իր ճշգրտումն էր մտցնում երիտասարդության պլաններում և ամբողջությամբ պլանավորվող տնտեսության պայմաններում իրականում ուսանող էին դառնում դպրոցն ավարտողների մոտ 20 տոկոսը: Այն տարիներին համալսարանական կրթությունն անվճար էր և ավանդաբար սեփական համալսարանները չունեցած ժողովրդի համար հասանելի էր երիտասարդության նման խիստ մղումը դեպի բուհ, մանավանդ նրա դիպլոմը՝ անկախ գիտելիքների ու հմտությունների որակից, երաշխավորում էր մինչև ծերությունն աշխատանք և աշխատավարձ:

Այսօր իրավիճակը տրամագծորեն փոխվել է և կրթությունը վերածվել է ապրանքի, որը շատ քանակ արժե: Հայաստանի հանրապետությունում միջին տևողությամբ համալսարանական կրթությունն ընտանիքի վրա նստում է ամենահամեստ հաշվարկներով 8-10 հազար ԱՄՆ դոլար: Հետևաբար այնքան էլ հասանելի չէ բնակչության, մասնավորապես երիտասարդության նման կողմնորոշվածությունը:

Ընտանիքի ապահովվածության մակարդակը որոշ ճշգրտումներ մտցնում է նրանց և նրանց երեխաների կենսական պլաններում: Դա երևում է հետևյալ աղյուսակից.

Երեխաների պլանները կախված ընտանիքի ապահովվածության մակարդակից

	ընտանիքը հազիվ է ծայրը-ծայրին հասցնում	ստացած փողը հազիվ բավարարում է հիմնական կարիքների համար, բայց չեն կարող գնել հեռուստացույց, լվացքի մեքենա և նման բաներ	ստացած փողը հիմնականում բավարարում է, բայց ավտոմեքենա, բնակարան և նման բաներ չեն կարող գնել	ստացած փողը լիովին բավարարում է, կարող են նույնիսկ ավտոմեքենա, բնակարան և նման բաներ գնել	ընտանիքն իրեն ոչնչից չի զրկում
աշխատել	15,2	11,9	2,6	0	
սովորել տեխնիկումում, քոլեջում	23,2	20,3	12,2	11,4	6,3
սովորել համալսարանում	46,8	59,2	78,1	86,4	87,5
արհեստ սովորել	1,3	0,3	0,7		
զնալ բանակ	5,4	2,8	0,4	2,3	
այլ	8,1	5,6	5,9		6,3
ընդամենը	100 %	100 %	100 %	100 %	100 %

Այս տվյալները հաստատվում են մեկ այլ հարցի արդյունքներով նույնպես: Հարցվողներին առաջարկվել էր նկատի ունենալով իրենց ընտանիքի նյութական ապահովվածության չափը, իրենց դասել հասարակության սոցիալական շերտերից որևէ մեկին: Ահա սոցիալական շերտից կախված նույն հարցի պատասխաններն այսպես են բաշխվում

դպրոցից հետո երեխան մտադիր է	հարուստ	միջին	աղքատ
աշխատել		6,1	19,5

ընդունվել քոլեջ	18,8	16,3	24,2
ընդունվել համալսարան	81,3	68,6	43,3
արհեստ սովորել		0,8	0,4
մեկնել բանակ		2,6	4,3
դեռ չի որոշել		1,5	2,6
այլ		3,6	5,6
պատասխան չկա		0,4	
ընդամենը	100 %	100 %	100%

Դեպի բուհական կրթությունը կողմնորոշվածների մեջ բոլոր մարզերում էլ գերակշռում է դեպի տնտեսագիտական մասնագիտությունները կողմնորոշումը.

Երեխայի պլանները	Երևան	Արարատ	Արմավիր	Արագած.	Գեղարք.	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Լոռի
ստանալ տնտես. մասնգ.	18,6	7,1	18,5	13,7	7,6	11,6	9,2	22,9	17,6	10,3	16,5

Երեխաների կոնկրետ մասնագիտական պլանները ըստ ընտանիքների սոցիալական դրության այսպիսի կառուցվածք ունեն.

Երեխայի պլանները	հարուստներ	միջին շերտ	աղքատներ
բժշկություն	12,5	6,6	3,9
մանկավարժություն		5,7	3,9
արվեստի ոլորտ	6,3	2,2	2,2
օտար լեզուներ		3,6	1,3
տնտեսագիտություն	31,3	14,7	13,9
գինվորական		1,0	0,4
տեխնիկական մասն.		1,7	3,0
հումանիտար բնական գիտություն.	12,5	10,4	8,2
սպորտ	6,3	2,1	0,4
հրավագիտություն	6,3	1,1	1,7
ֆիզմաթ.գիտ.	18,8	7,6	2,6
ճարտարապ. շինարա.		2,4	1,7
կիրենոնետիկական		1,4	1,7
ոստիկանություն		4,7	3,9
մանկաբարձ,բուժք.		0,6	0,9
որևէ արհեստ		2,9	2,6
այլ		3,6	3,0
պատասխան չկա		5,3	6,5
ընդամենը	100%	100%	100%

Ինչպես տեսնում ենք ընտանիքի սոցիալական դրությունը և ուղղակիորեն, և անուղղակիորեն պայմանավորում է երեխաների ինչպես սոցիալական,այնպես էլ մասնագիտական կողմնորոշումը: Ժողովրդական ասացվածքի լեզվով ասած, ,,յուրաքանչյուր երեխա փորձում է

իր ուրքերը պարզել իր վերնակի չափերով,,: Դպրոցի դերի թուլացման պայմաններում փողը դառնում է երեխաների սոցիալ-մասնագիտական պլանների ձևավորման և իրականացման կարևոր նախապայման: Անգամ „պետպատվերի,, գործոնը որևէ դեր չի խաղում սոցիալական արդարության հաստատման գործում: Դրա ընձեռած հնարավորությունից չեն կարողանում օգտվել անապահով ընտանիքների երեխաները, որովհետև մյուս ընտանիքներից սերածները մրցակցությունն արդեն շահած են լինում մինչև ընդունելության քննությունները: Ընտանիքի աղքատությունը լուրջ խոչնդոտ է հանդիսանում երեխաների սոցիալական տեղաշարժերի ճանապարհին: Քանի որ կրթությունը ծառայում է որպես շարժասանդուղք հասարակության սոցիալական կառուցվածքը վերարտադրելիս, աղքատությունը վերարտադրում է իրեն: Սոցիալական արդարության սկզբունքի իրագործման համար հասարակությունը պետք է ստեղծի ավելի արդյունավետ գործող մեխանիզմներ:

Այսօր դեպի բուհ երիտասարդության այսքան մեծ կողմնորոշվածությունն ինչ որ չափով իներցիոն բնույթ ունի, որովհետև հասարակության սոցիալ-տնտեսական փոխակերպումից հետո դեռ շատ ժամանակ կպահանջվի, որպեսզի մարդիկ հոգեբանորեն հարմարվեն նոր պայմաններին, առավել ևս դառնան նոր հարաբերությունների լիարժեք սուբյեկտ: Վերևի երկու աղյուսակների տվյալները վկայում են, որ ընտանիքի ապահովվածության չափի աճման հետ աճում է համալսարանական կրթություն ստանալ ցանկացողների թիվը: Սակայն անգամ նման միտման դեպքում իրենց գնահատմամբ ամենաանապահով ընտանիքներից երեխաների մոտ կեսը կողմնորոշված է դեպի բուհական կրթությունը: Իհարկե, դա միայն կողմնորոշում է, որը մինչև իրականանալը ճշգրտվում է տարբեր գործոնների ազդեցությամբ: Այնուամենայնիվ, համալսարանական կրթություն ստանալ ցանկացողների թիվը վկայում է, որ ընտանիքն անգամ այսօրվա ծանր պայմաններում պատրաստ է իր սուղ ռեսուրսները ծախսել երեխաներին բարձրագույն կրթություն ապահովելու համար: Իսկ որ այս ուղղությամբ պլանների իրագործումն այսօր խիստ դժվարացած է, հաստատվում է տարբեր հետազոտությունների արդյունքում: Դրանք միանշանակ վկայում են, որ այսօր հանրակրթական դպրոցն իր շրջանավարտներին չի տալիս բավարար գիտելիքներ, որ նրանք առանց դասուսույցների օգնության հաղթահարեն համալսարանի ընդունելության արգելքը:

Այդ վաղուց հասկացել են ինչպես ծնողները, այնպես էլ աշակերտները, որոնք պատրաստվում են դպրոցն ավարտել: Եվ նրանք բուհական կողմնորոշում ունենալու դեպքում նախատեսում են ներառումը դասուսույցման համակարգում: Այն հարցին, թե այսօր միայն դպրոցի տված գիտելիքներով հնարավոր է ընդունվել բուհ, այո են պատասխանել բոլոր հարցվածների ընդամենը 5,4 տոկոսը, այն դեպքում, երբ մոտ 85 տոկոսը ոչ է պատասխանել: Այս հարցման դեպքում բուհի ընդունելությանը պատրաստվող աշակերտների 84,2 տոկոսը՝ ծնողների հավաստմամբ, լրացուցիչ պարապում է դասատուի կամ դասախոսի հետ: Ընդամենը 5,7 տոկոսն է դա անում է բուհի նախապատրաստական դասընթացներում: Մեկ տոկոսից փոքր մասի համար դասուսույցի դերը ստանձնել է ծնողը, որը հավանաբար մասնագետ է անհրաժեշտ առարկայի գծով: Ընդամենը 28,3 %-ը, ովքեր հավանաբար այլընտրանք չունեն, հույսը դրել է դպրոցում տրվող գիտելիքների վրա: Լրացուցիչ պարապմունքների տեսանկյունից վիճակը որոշ տարբերություններ է դրսևորում տարբեր մարզերում: Յոթ մարզում լրացուցիչ պարապողները կազմում են այդ մարզերից հարցվածների երեխաների մոտավորապես 45-50 տոկոս: Նրանցից էականորեն տարբերվում են Սյունիքը և Վայոց Ձորը: Առաջինում բավականի մեծ թիվ է կազմում լրացուցիչ պարապողների թիվը, իսկ երկրորդում շատ փոքր:

Երեխայի կրթության շարունակման պլանի դեպքում	Երևան	Արարատ	Արմավիր	Արագած.	Գեղարք.	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Լոռի
Լրացուցիչ պարապում է դասուսույ	51,9	64,3	46,2	45,1	47,0	45,3	56,3	81,3	35,3	46,2	41,8

ցի մոտ										
--------	--	--	--	--	--	--	--	--	--	--

Այս տեսանկյունից նույնպես երեխաների գործելակերպը պայմանավորված է ընտանիքի հնարավորություններով: Դա ակնհայտ է հետևյալ աղյուսակից.

երեխայի պլանները երեխայի ուսման շարունակման պլանի դեպքում երեխայի գործողությու- նները	ընտանիքի ապահովվածության չափը հազիվ է ծայրը- ծայրին հասցնու- մ	ստացած փողը հազիվ բավարարում է հիմնական արիքների համար,բայց չեն կարող գնել հեռուստացույց, լվացքի մեքենա և նման բաներ	ստացած փողը հիմնականում բավարարում է, բայց ավտոմեքենա,բն ակարան և նման բաներ չեն կարող գնել	ստացած փողը լիովին բավարարու- մ է, կարող են նույնիսկ ավտոմեքեն ա,բնակարա- ն և նման բաներ գնել	ընտան իքը իրեն ոչնչից չի զրկում
աշխատում է լավ սովորել դպրոցում լրացուցիչ պարապում է	26,9	26,7	17,0	6,8	6,3
դասատուի/ դասախոսի մոտ պարապում է բուհի նախապա- տրաստակ ան դաընթացն երում պարապում է	37,7	48,9	64,4	81,8	81,3
ինքնուրույ ն պարապում է ծնողի հետ այլ պատասխ ան	3,4	2,5	8,1	6,8	6,3
պարապում է ծնողի հետ այլ պատասխ ան	2,4	2,8	0,7		
պարապում է ծնողի հետ այլ պատասխ ան	1,0	0,8			
պատասխ ան չկա ընդամենը	7,7	1,9	1,5	2,3	6,3
	19,9	14,4	5,2	2,3	
	100%	100%	100%	100%	100%

Ինչպես տեսնում ենք, ընտանիքի ապահովվածության մակարդակի բարձրացման հետ աճում է դասուսույցների մոտ պարապող երեխաների թիվը: Այս օրինաչափությունը հաստատվում է նաև մեկ այլ աղյուսակի տվյալներով: Հարցման ժամանակ հարցվողներին առաջարկվել էր իրենց ընտանիքը դասել երեք սոցիալական շերտերից որևէ մեկին՝ հարուստներ, միջին շերտ և աղքատներ: Համապատասխանաբար այդ ընտանիքներից դասուսույցների մոտ պարապում են

երեխաների 75 տոկոսը, 56,5 տոկոսը և 35,9 տոկոսը: Բնակավայրի տիպից կախված՝ քաղաքային և գյուղական, նույնպես որոշ տարբերություններ են նկատվում: Աղյուսակից երևում է, որ քաղաքում մի փոքր ավելի շատ են դասուսույցների մոտ պարապողները, ինչպես նաև բուհերի նախապատրաստական դասընթացներում պարապողները: Գյուղում վերջինները բացակայում են, իսկ դասուսույցներն էլ սովորաբար դպրոցի դասատուներն են:

Եթե երեխան մտադիր է շարունակել ուսումը, ապա ինչ է անում դրա համար	քաղաք	գյուղ
լավ է սովորում դպրոցում	23,6	20,6
լրացուցիչ պարապում է դասատուի/դասախոսի հետ պարապում է նախապատրաստական դասընթացներում	52,7	48,9
ինքնուրույն է պարապում	1,5	3,1
այլ պատասխան	2,7	2,7
պարապում է ծնողների հետ	0,7	0,4
պատասխան չկա	10,9	26,4
ընդամենը	100%	100%

Այսպիսով, շուկայական հարաբերությունների պայմաններում դպրոցը շատ լուրջ խնդիրներ է ստեղծում նյութապես անապահով ընտանիքների երեխաների համար՝ բարձրագույն կրթությունը դարձնելով էլ ավելի անմատչելի:

Գաղտնիք չէ, որ դասուսույցի մոտ ապագա դիմորդի լրացուցիչ պարապմունքները ծանր բեռ են հանդիսանում ընտանիքների համար: Սակայն վերը նշված իներցիոն շարժումը ընտանիքներին ստիպում է լարվել և հայթայթել անհրաժեշտ միջոցները, որոնք բավականին շատ են:

Դասուսույցներին վճարվող տարեկան գումարի չափից կախված ուսումնասիրված ընտանիքներն այսպես են բաշխվում.

մինչև 300 դոլլար	15,9
301-500 դոլլար	13,6
501-700 դոլլար	20,0
701-900 դոլլար	14,2
901-1100 դոլլար	10,3
1101-1300 դոլլար	8,4
1301-1500 դոլլար	6,2
1501 դոլլար և ավելի	6,6
պատասխան չկա	4,5

Ձարմանանալի է, որ այս հարցին պատասխանած հարցվողների 77,2 տոկոսը նշում է, որ իրենց համար դժվար չէ այդ գումարը գտնելը: Մանավանդ, որ գումարի վճարումը դեռ հարյուր տոկոսով չի ապահովում երեխայի ուսանող դառնալը: Սա ևս վկայում է այն մասին, որ ընտանիքը շարունակում է իր պարտքը համարել երեխաներին ամեն զնով բարձրագույն կրթություն պահովելը: Իսկ թե որքանով կատարված ներդրումը կփոխհատուցվի հետագայում, դա միայն

կյանքը ցույց կտա: Ընտանիքի կողմից երեխայի բուհի ընդունելությանը նախապատրաստական շրջանում դասուսուցման նպատակով կատարվող ծախսերի տեսանկյունից տարբեր մարզերում պատկերն այսպիսին է.

	Երևան	Արարատ	Արմավիր	Արագածոտն	Գեղարքունիք	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Լոռի	ընդամենը
մինչև 300 դոլ.	28,0	9,8	7,3	4,9	7,3	14,6	8,5	9,8	1,2	1,2	7,3	100 %
301-500	27,1	7,1	14,3	2,9	4,3	11,4	11,4	11,4		2,9	7,1	100 %
501-700	31,1	7,8	7,8	5,8	1,0	4,9	18,4	6,8	3,9	2,9	9,7	100 %
701-900	30,1	12,3	2,7	8,2	4,1	12,3	6,8	13,7		1,4	8,2	100 %
901-1100	45,3	7,5	7,5	9,4	7,5	3,8	7,5	1,9		1,9	7,5	100 %
1101 - 1300	72,1	9,3		7,0	2,3	2,3		2,3			4,7	100 %
1301 - 1500	78,1	3,1	3,1	3,1		6,3					6,3	100 %
1501 և ավելի	88,2			2,9		2,9	2,9	2,9				100 %
այլ	39,1	4,3	8,7	4,3		8,7		4,3	4,3	8,7	17,4	100 %

Ինչպես տեսնում ենք պարապմունքների համար ամենբարձր վճարումները կատարվում են Երևան քաղաքում, որը պայմանավորված է դասուսուցման համակարգի այնտեղ կենտրոնացվածությամբ: Քաղաք-գյուղ կտրվածքով նույնպես նկատվում է էական տարբերություն վարձավճարների չափերի մեջ: Քաղաքային բնակավայրերում համեմատաբար բարձրորակ դասուսույցները թելադրում են իրենց բարձր գները, այն դեպքում, երբ գյուղական բնակավայրերում այդ դերը ստանձնում են հիմնականում դպրոցների ուսուցիչները, ովքեր բավարարվում են ցածր վճարներով: Սակայն ինչպես վկայում են հարցման արդյունքները, անգամ բարձր վճարումները չեն ստեղծում բացարձակ համոզվածություն պլանների իրականացման հարցում: Ընտանիքը որպես ռեսուրսների համալիր, մեկնարկային տարբեր հնարավորություններ է ստեղծում երեխաների համար կենսական պլանների իրականացման ժամանակ: Հայկական իրականությունում շատ հաճախ այդ պլանները նախագծվում և իրականացվում են հենց ընտանիքների ակտիվ մասնակցությամբ: Ինչ վերաբերում է իրենց երեխաների ուսման շարունակման պլաններին, ապա հայ ընտանիքը պատրաստ է օգտագործել բոլոր հնարավոր միջոցները: Հաջողության հասնելու տեսանկյունից ավելի վստահ են քաղաքաբնակ ընտանիքները, քան գյուղաբնակները: Հաջողության հասնելու հարցում բացարձակապես վստահ են քաղաքաբնակ ծնողների 31,8 տոկոսը՝ գյուղաբնակների 24,8 տոկոսի դիմաց: Այդ համոզվածությունը կայուն աճում է ընտանիքների ապահովվածության մակարդակի աճին զուգընթաց:

երեխայի պլանների իրագործման	հազիվ է ծայրը-	ստացած փողը հազիվ բավարարում է	ստացած փողը հիմնականում բավարարում է,	ստացած փողը լիովին	ընտանիքը իրեն
-----------------------------	----------------	--------------------------------	---------------------------------------	--------------------	---------------

անհարցում ծնողի վստահության աստիճանը	ծայրին հասցնում	հիմնական արիքների համար, բայց չեն կարող գնել հեռուստացույց, լվացքի մեքենա և նման բաներ	բայց ավտոմեքենա, բնակարան և նման բաներ չեն կարող գնել	բավարարում է, կարող են նույնիսկ ավտոմեքենա, բնակարան և նման բաներ գնել	ոչնչից չի զրկում
բոլորովին վստահ չեն	7,4	1,7	1,9	2,3	
մասամբ վստահ են	56,2	52,8	57,0	40,9	50,0
լիովին վստահ են	19,2	31,7	34,4	54,5	50,0
պատասխան չկա	17,2	13,9	6,7	2,3	
ընդամենը	100%	100%	100%	100%	100%

Իրենց երեխաների հնարավոր անհաջողությունը ծնողները բացատրում են տարբեր գործոնների ազդեցությամբ: Ըստ ընտանիքների ապահովվածության չափի հնարավոր անհաջողության պատճառներն այսպիսի կշիռներ են ստանում.

	հարուստ	միջին շերտ	աղքատ
փողի պակասը	6,3	22,4	36,8
գիտելիքների պակասը	12,5	12,9	8,7
գիտելիքների ոչ ճիշտ գնահատումը	18,8	20,8	11,7
կաշառակերությունը	6,3	20,1	19,9
մեծ մրցույթը		0,3	0,4
ոչինչ	25,4	6,4	1,3
այլ գործոն	12,5	3,7	1,7
ընդամենը	100 %	100 %	100 %

Ըստ ընտանիքի ֆինանսական հնարավորությունների գործոնի հետ կապի մեջ դիտարկելիս այդ երևույթի բացատրություններն այսպիսին են.

երեխայի ուսման պլանների իրագործմանը խանգարող հնարավոր պատճառները	հազիվ է ծայրին հասցնում	ստացած փողը հազիվ է բավարարում է հիմնական արիքների համար, բայց չեն կարող գնել հեռուստացույց, լվացքի մեքենա և նման բաներ	ստացած փողը հիմնականում բավարարում է, բայց ավտոմեքենա, բնակարան և նման բաներ չեն կարող գնել	ստացած փողը լիովին բավարարում է, կարող են նույնիսկ ավտոմեքենա, բնակարան և նման բաներ գնել	ընտանիքը իրեն ոչնչից չի զրկում
փողի պակասը	41,8	25,6	12,2	4,5	
գիտելիքների պակասը	8,8	12,8	14,4	13,6	18,8
գիտելիքներ	12,5	16,9	25,9	27,3	18,8

րի ոչ ճիշտ գնահատու մը					
կոռուպցիա ն և կաշառակե րությունը	16,5	19,2	24,4	11,4	31,3
մեծ	0,3	0,3	0,4		
մրցույթը					
ոչինչ	3,0	6,1	5,2	18,2	6,3
այլ	3,0	3,6	2,2	6,8	12,5
պատճառ					

Այսպիսով, նյութական ցածր ապահովվածությամբ ընտանիքները հիմնական վտանգը տեսնում են ֆինանսական միջոցների անբավարարության մեջ: Այն կարող է պատճառ դառնալ, որ անգամ բուհի ընդունելության արգելքը հաղթահարելուց հետո երեխան չդառնա ուսանող կամ չավարտի կրթությունը, որովհետև հարկավոր է ուսման վարձ մուծել, վարձել բնակարան, վճարել տրանսպորտային ծախսերը և այլն: Քիչ թե շատ ապահովված ընտանիքները քանի որ արդեն բարձր գին են վճարել երեխաների մոտ գիտելիքների բարձր մակարդակ ապահովելու համար, ավելի շատ մտահոգված են դրանց գնահատման ընթացքում հնարավոր սուբյեկտիվությունից: Ամանաապահովված ընտանիքները հիմնական վտանգը համարում են կոռուպցիան: Հավանաբար նրանք քաջ ծանոթ լինելով ընդունելության ընթացքում հանդիպող «խաղերին», կարծում են, որ դրանց ժամանակ կարող են տանուլ տալ այնպիսի ուժեղ խաղաքարտերով, ինչպես օրինակ բարձր ռեյտինգ ունեցող դասույցների մոտ «վարժեցված», լինելու հանգամանքը կամ էլ փողը, որի գործադրման դեպքում միշտ կարող է գտնվել մեկ ուրիշը, ով ավելի շատ կառաջարկի:

Սակայն մասնագիտական պլանների մակարդակում արդեն նկատվում է, որ կյանքը հասցրել է որոշ ճշգրտումներ կատարել: Ուսման շարունակության պլան ունեցողների 18,5 տոկոսը մտադիր է ստանալ տնտեսագիտական կրթություն, 12,3 տոկոսը հումանիտար/հոգ.,սոց. և այլն/, 8 տոկոսն իրավաբանական, 7,4 տոկոսը բժշկական, 6,6 տոկոսը մանկավարժական, 5,6 տոկոսը համակարգիչների հետ կապված մասնագիտություններ և այլն: Այսինքն երեխաները և ծնողները որոշ չափով հաշվի են առնում աշխատանքի շուկայում աշխատուժի պահանջարկի կառուցվածքը:

Ակնհայտ է, որ իրենց դպրոցական երեխաների կյանքի հետագա շարունակության հարցում բուհական կողմնորոշում ունեցող ծնողները շարունակում են հույս չդնել դպրոցի վրա: Նրանց կարծիքով վերջինը շարունակում է չկատարել իր հիմնական գործառույթները: Հարցվողներն այսպիսի խնդիրներ են մատնանշում դպրոցական կրթության ու դաստիարակության գործում.

1	Կաշառակերությունը,ամեն ինչ փողով է	7,6
2	Դպրոցի տված գիտելիքների ցածր մակարդակը	13,8
3	Դպրոցական ծրագրերի և ընդունելության ծրագրի անհամապատասխ.	7,4
4	Կարգապահության ցածր մակարդակը, ուսուցիչների ոչ խիստ վերաբեր.	12,4
5	Ծրագրերը թերի են,դասագրքերի որակը ցածր	7,1
6	Ուսուցիչների մասնագիտական որակը ցածր է	11,4
7	Դպրոցի կենցաղային պայմաններն անբավարար են	3,2
8	Ուսուցիչների անտարբերությունը	8,7
9	Դասավանդման ոչ ճիշտ մեթոդները	6,2
10	Դասագրքերի թանկությունը	1,4
11	Մանկավարժների ցածր աշխատավարձը	2,8
12	Երեխաների շահագրգռվածության պակասը	7,5
13	Ընդամենը	100

											%
	Երևան	Արարատ	Արմավիր	Արագածոտն	Գեղարքունիք	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Լոռի
կաշառակերությունը, ամեն ինչ փողով է դպրոցի տված գիտելիքների ցածր մակարդակը	11,7	6,0	1,5	5,9	6,1	9,3	5,7			17,9	1,1
դպրոցական ծրագրերի և բուհի ընդունելության ծրագրերի անհամապատասխանությունը	20,3	11,9	13,8	3,9	7,6	7,0	21,8	6,3		5,1	8,8
կարգապահության ցածր մակարդակը, ուսուցիչների ոչ խիստ վերաբերմունքը ծրագրերը թերի են, դասագրքերի որակը ցածր	7,8	6,0	6,2	2,0	6,1	17,4	5,7	4,2		10,3	6,6
ուսուցիչների մասնագիտական որակը ցածր է	11,4	4,8	27,7	13,7	1,5	12,8	17,2	25,0	17,6	15,4	5,5
դպրոցի կենցաղային պայմաններն անբավարար են	4,4	8,3	3,1	2,0	16,7	8,1	5,7	22,9	11,8	2,6	8,8
ուսուցիչների անտարբերությունը	10,0	11,9	23,1	15,7	21,2	7,0	5,7	16,7	11,8	15,4	3,3
դասավանդման ոչ ճիշտ մեթոդները	0,8	3,6	4,6	11,8	4,5		2,3	6,3		5,1	7,7
դասագրքերը թանկ են մանկավարժների աշխատավարձը ցածր է երեխաների շահագրգռվածության պակասը	6,9	8,3	6,2	19,6	7,6	16,3	3,4	16,7	5,9	7,7	6,6
դասավանդման ոչ ճիշտ մեթոդները	4,4	7,1	4,6	15,7	6,1		3,4	8,3		5,1	17,6
դասագրքերը թանկ են մանկավարժների աշխատավարձը ցածր է երեխաների շահագրգռվածության պակասը	1,1		1,5		1,5	2,3	2,3		5,9	2,6	2,2
դասավարժման անբավարար պայմանները	4,4	3,6	4,6	2,0		1,2	1,1				3,3
դասավարժման անբավարար պայմանները	7,2	8,3	10,8	9,8	9,1	4,7	8,0	2,1		12,8	7,7

Ինչպես տեսնում ենք, հիմնական մեղադրանքն ուղղված է ուսուցիչների հասցեին՝ դժգոհ են նրանց մասնագիտական և մարդկային որակներից, սակայն այս ամենն ի վերջո համակարգին ուղղված դիտողություն է, որը կարելի է ընդհանրացված ձևակերպել այսպես. Այսօրվա դպրոցը երեխային չի նախապատրաստում բուհի համար: Այն դեպքում, երբ խորհրդային դպրոցին մեղադրում էին հիմնականում բուհի համար աշխատելու մեջ, այսօրվա դպրոցն անում է հակառակը: Դրա հետևանքով բոլորից շատ տուժում է ծնողը, որը ստիպված է նորից վճարել և շատ ավելի թանկ: Տուժում է նաև երեխան, որը բաց թողնելով հանգիստ սովորելու հնարավորությունը, ստիպված է ներգրավվել ծանր ու սթրեսներով լի դասուսուցման գործընթացներում: Չնայած բազմաթիվ քննարկումներին և դպրոցի անմխիթար վիճակը շահագրգիռ մարմիններին ի ցույց դնելուն, դրությունը շատ դանդաղ է փոխվում: Հարցվողների 36,8 տոկոսի գնահատմամբ վերջին հինգ տարվա կտրվածքով դպրոցական կրթության ու դաստիարակության որակը նույնն է մնացել: Նրանց միայն 25,6 տոկոսն է կարծում, որ այդ որակը բարելավվել է: Դրան հակառակ 37,5 տոկոսի պնդմամբ վիճակն ավելի է վատացել:

դպրոցում կրթության որակը վերջին 5 տարում. վատացել է	Երևան	Արարատ	Արմավիր	Արագածոտն	Գեղարքունիք	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ	Լոռի
նույնն է մնացել	44,4	40,5	23,1	35,3	34,8	25,6	28,7	22,9	17,6	25,6	49,5
լավացել է	13,9	28,6	35,4	19,6	39,4	33,7	35,6	33,3	35,3	33,3	28,6
ընդամենը	100 %	100 %	100%	100%	100 %	100%	100 %	100%	100 %	100%	100 %

Ծնողները դպրոցի վիճակի բարելավվումը կապում են կարգապահության խստացման հետ՝ 27,8% ,կադրերի որակի բարելավման հետ՝26,7%, դպրոցական դասագրքերի և ծրագրերի որակի բարելավման հետ՝ 23,5%, կոռուպցիայի և հովանավորչության վերացման հետ՝22,9%: Հարցվողները նշում են նաև դպրոցի վիճակի բարելավման այնպիսի անուղղակի ճանապարհ, ինչպիսին է ուսուցիչների աշխատավարձի բարձրացումը՝27,9%:

Բուժսպասարկում

Հարցվողների ընդամենը 18,5 տոկոսն է նշել որ շատ վաղուց է դիմել բժիշկների օգնությանը կամ էլ չի հիշում թե երբ է դիմել: Նրանց մոտավորապես 68 տոկոսը վերջին անգամ բժշկի դիմել է հարցմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում: Բժշկին դիմելու հիմնական պատճառը հանդիսացել է ատամների հետ կապված խնդիրը՝21%, ընդհանուր ստուգումը՝ 12,9 %,որի պատճառը տազնապալից զգացողություններն են, վիրահատությունը՝9,4%, մրսածության,գրիպի,հարբուխի պատճառով՝7 %, սիրտանոթային համակարգի հետ կապված խնդիրներով՝ 6,5 %, լաբորատոր անալիզներ՝5,4 %, հղի կնոջ կոնսուլտացիա,նորածնի առնչությամբ՝5% , կոտրվածքներ՝4,8, տեսողության և լսողության հետ կապված խնդիրներով՝3,8% և այլն: Նրանց 76,2 %-ը վճարել է բուժօժանայությունից օգտվելիս: Ահա թե ինչպես են հայթայթել անհրաժեշտ զոււմարը հարցվողները:

այդ նպատակի համար ունեինք պահած ստիպված կրճատեցինք այլ ծախսեր պարտք արեցինք դիմեցինք ազգականների, հարազատների օգնությանը այլ պատասխան պատասխան չկա ընդամենը	32,4 41,6 20,3 3,2 4,7 11,0 100%
---	--

Անգամ վճարողների այդքան մեծ տոկոսի պայմաններում բուժսպասարկումից լիովին գոհ են մնացել ընդամենը 36,9 տոկոսը: Մնացածը կամ մասամբ են գոհ եղել կամ էլ դժգոհ են մնացել սպասարկման որակից:Այն հարցին, թե հատկապես ինչը ձեզ չի բավարարում բուժօժանայություններից օգտվելիս, այսպիսի պատասխաններ են ստացվել խմբավորման արդյունքում./Գումարը 100 տոկոսից ավելին է,որովհետև հարցվողը միաժամանակ կարող էր նշել մի քանի պատասխան/ բուժանձնակազմի վատ վերաբերմունքը, սպասարկման ցածր կուլտուրան բարձր գները

9,6
63,0

կիրառվող բուժսարքավորումների և բուժման մեթոդների որակը	10,8
բուժհաստատություններում առկա կենցաղային պայմանները	9,5
դեղամիջոցների պակասը	8,6
բուժանձնակազմի ցածր որակը	12,5
հիվանդանոցների և պոլիկլինիկաների հեռու գտնվելը	4,3
այլ պատասխան	2,5
ընդամենը	100%

Հարցվածների 60,3 տոկոսը նշել է, որ այս տարի եղել է դեպք, երբ ընտանիքը բժշկական օգնության կարիք է զգացել, սակայն չի դիմել բժշկի: Նման դեպքեր եղել են ապահովված ընտանիքների 18,8 տոկոսի մոտ, միջին շերտի ներկայացուցիչներից 54,6 տոկոսի մոտ և աղքատ ընտանիքների 79,7 տոկոսի մոտ: Բժշկի չդիմելու պատճառները տարբեր են: Դրանք ներկայացված են հետևյալ աղյուսակում.

որովհետև միջոցներ չունեինք	51,4
ինքնաբուժությամբ զբաղվեցինք	34,4
դիմեցինք ժողովրդական բժշկությանը/հեքիմի	1,7
համապատասխան մասնագետ չգտանք	1,5
ուղղակի անտեսեցինք, որովհետև դեպքը թեթև էր	14,5
այլ պատասխան	2,0
ընդամենը	100 %

Երբ փորձում ենք բացատրությունները դիտարկել ընտանիքի ֆինանսական հնարավորությունների հետ կապի մեջ, այսպիսի պատկեր է ստացվում.

	հազիվ է ծայրը-ծայրին հասցնում	ստացած փողը հազիվ բավարարում է հիմնական արիքների համար, բայց չեն կարող գնել հեռուստացույց, լվացքի մեքենա և նման բաներ	ստացած փողը հիմնականում բայց ավտոմեքենա, բնակարան և նման բաներ չեն կարող գնել	ստացած փողը լիովին բավարարում է, կարող են նույնիսկ ավտոմեքենա, բնակարան և նման բաներ գնել	ընտանիքը իրեն ոչնչից չի զրկում
միջոցների պակասը	55,6	31,7	8,9	2,3	6,3
ինքնաբուժությամբ զբաղվեցինք	16,2	22,8	24,4	15,9	12,5
դիմեցինք ժող.բժշկությանը/հեքիմի		1,4	1,5		
համապատասխան մասնագետ չգտանք	0,7	1,4	0,7		

ուղղակի անտեսեցի նք, որովհետև դեպքը թեթև էր այլ	3,7	8,6	15,9	4,5	6,3
պատասխան պատասխան ան չկա ընդամենը	1,0	1,7	1,1		
	100 %	100 %	100 %	100 %	100 %